ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞ր ստեղծագործության մասին է Միքայել Նալբանդյանն ասել. **«…այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»**:

ա/ Գրիգոր Նարեկացի «Մատյան ողբերգության»
բ/ Ներսես Շնորհալի «Ողբ Եդեսիո»
գ/ Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»
դ/ Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի»:

(1,5)

<u>Պատասխան</u>- *դ/ Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի»*

2. **4090, 4, Իսահակյան**: *- Ի՞նչ կապ կա այս ամենի մեջ:*

(1,5)

<u>Պատասխան</u>- *Խոսքը Արագած /Ալագյազ/ լեռան մասին է: 4090լեռան բարձրությունն է, 4-ը գագաթների թիվը, Ավ.Իսահակյանը՝ այն պոետը, ով բազմաթիվ բանաստեղծություններ է ձոնել այս լեռանը:*

3. **«…լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհքը կանուշացնե»** («Համբերանքի չիբուխը») :

Իսահակյանական այս տողը հայ բանաստեղծներից ո՞ւմ և ո՞ր ստեղծագործությունն է հիշեցնում: Ո՞րն է դրանց առանցքային իմաստը:

(2,5)

<u>Պատասխան</u> – *Տողը հիշեցնում է Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի մեկ քառատողը.*
Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,

Երնե՛կ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:
Առանցքային իմաստը մարդու՝ բարին արարելով անմահանալու, կյանքի անցողիկությանը հակադրվելու գաղափարն է:

4.*Հայոց Աշխարհի վրա ինչո՞ւ է ողբում Մովսես Խորենացին, եթե, ինչպես ինքն է նշում, հայոց ազգը համարվում էր* «բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»:

(2)

<u>Պատասխան</u>- *Ողբում է, քանի որ ազգերի մեջ վեհագույնը լինելով հանդերձ, Հայաստանը չի կարողանում ինքնիշխան լինել, հայ ժողովուրդը չի կարողնում արժանապատիվ ապրել ներքին թշնամիների պատճառով: Վերացել են թագավորն ու քահանան, խորհրդականն ու ուսուցիչը, սերն ու ամոթը, հիմնավորվել է տգիտությունը, Աստված մեզ անտեսել է:*

5. *Ճիշտ դասավորեք Հովհ. Թումանյանի քառյակի տողերը.*

Ձեռքերն արնոտ նա գնում է դեռ կամկար,
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,
ՈՒ հեռու է մինչև Մարդը իր ճամփան,
Բերանն արնոտ մարդակերը էն անբան:

(1,5)

<u>Պատասխան</u> - *Բերանն արնոտ մարդակերը էն անբան*
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,
Ձեռքերն արնոտ նա գնում է դեռ կամկար,
ՈՒ հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

6. Սարեն կուգաք, նախշուն հավքե՛ր,
Ա՛խ, իմ մորքս տեսել չե՞ք…
Իսահակյանի գրչին պատկանող այս տողերի նմանությամբ ժողովրդական ո՞ր երգում է լուր ստանալու համար հարց ուղղվում թռչունին:

Ո՞վ է երաժշտության հեղինակը:

(2,5)

<u>Պատասխան</u> - *<<Կռունկ>> ժողովրդական երգն է, որը մշակվել է Կոմիտասի կողմից:*

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս.

7.Վեներային խորհրդանշող վարդը, ի սկզբանե, սպիտակ էր, իսկ երբ փուշը ծակեց նրա ոտքը, արյան կաթիլներից վարդը կարմրեց: Քրիստոնեության շրջանում վարդը դարձավ Մարիամ Աստվածածնի խորհրդանիշը: Տիրամորը երբեմն անվանում էին «անփուշ վարդ», քանզի փուշը մեղքի խորհրդանիշ է: Ըստ ավանդույթի, նախքան Ադամի մեղսագործությունը, դրախտում վարդն աճում էր առանց փուշ:
«Վարդը» վերնագրով ո՞ւմ ստեղծագործությունն է թարգմանել Հովհ. Թումանյանը: Ո՞վ է ռոմանսի հեղինակը:

(2)

<u>Պատասխան</u> – *Թումանյանը թարգմանել է գերմանացի նշանավոր գրող Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեի ստեղծագործությունը: Ռոմանսի հեղինակը կոմպոզիտոր, խմբավար Ռոմանոս Մելիքյանն է:*

8*. Շրջաստյթներ.*

Ազատության երգիչ –
Ավարայրի երգիչ –
Պատմահայր, քերթողահայր –
Ամենայն հայոց բանաստեղծ –
Սև ցելերի սերմնացան –
Անմահ քանաքեռցի –
Մեծ աղոթասաց –
Սկյուտարի սոխակ –

(2)

<u>Պատասխան</u> - *Ազատության երգիչ – Միքայել Նալբանդյան,*

Ավարայրի երգիչ – Եղիշե
Պատմահայր, քերթողահայր – Մովսես Խորենացի
Ամենայն հայոց բանաստեղծ – Հովհաննես Թումանյան
Սև ցելերի սերմնացան – Ակսել Բակունց
Անմահ քանաքեռցի – Խաչատուր Աբովյան
Մեծ աղոթասաց – Գրիգոր Նարեկացի
Սկյուտարի սոխակ – Պետրոս Դուրյան

*9. Դ. Վարուժանը ակտիվ մասնակցություն է ունեցել «**Նավասարդ**» տարեգրքի և «**Մեհյան**» ամսագրի հրատարակությանը: Այդ տարիներին նա իր ստեղծագործություններում պատկերում էր «**ցավն հաճույքին և հաճույքը ցավին**»:*

Ի՞նչ մտորումների մեջ էր բանաստեղծը և ո՞ր ժողովածուն է այդ օրերի արձագանքը: Թվարկել ժողովածուում ընդգրկված մի քանի բանաստեղծություններ:

(3)

<u>Պատասխան</u> – *Խոսքը Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուի մասին է, որը այդ տարիներին դարձավ գրականության մեջ հայտնի «հեթանոսական» շարժման ամենաամբողջական արտահայտությունը: Պատմության վաղնջական ժամանակներ վերադառնալու կոչը գեղարվեստական պայմանականություն է լոկ, որի միջոցով բանաստեղծը մարմին էր տալիս ուժեղ, կատարյալ մարդուն, ազատ, ներդաշն ու գեղեցիկ աշխարհին: Ժողովածուում ընդգրկված բանաստեղծություններից են՝ «Գեղեցկության արձանին», «Օ՜, Տալիթա», «Վանատուր», «Հեթանոսական», «Բեգաս», «Արևելյան բաղանիք» և այլն:*

10. Հայ իրականության մեջ ո՞վ առաջինը հայերենով

- *իմաստասիրական երկեր գրեց, վերլուծեց ու մեկնաբանեց հույն փիլիսոփաներին:*
- *իրավաբանական աշխատություն ստեղծեց:*

(1,5)

Պատասխան – *Դավիթ Անհաղթը, Մխիթար Գոշը:*